Արձանագրություն N2

<< ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/6>> ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 13 հոկտեմբերի 2017թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մխեյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Հ. Խաչատրյան, Ա. Մանուկյան, Գ. Խաչիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյան

1. Հայտերի ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտվելու վայրը	Էլ. հասցե
1	<<Կոմպասս>> ՍՊԸ	ք. Երևան, Չարենցի 66	compassarmeps@gmail.com
2	<<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ	ք. Երևան, Հր. Քոչար 15	eic-tender@mail.ru
3	<<Նորմա-պլյուս>> ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60	norma@arminco.com

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Գնային առաջարկների ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները:

Չափաբաչնի համարը	Անվանում	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		Նախահաշիվ ՀՀ դրամ
			Գնի առաջարկը առանց ԱԱՀ	ԱԱՀ	
1	Լազերային տպիչներ	<<Կոմպասս>> ՍՊԸ	1222000	244400	1372800
		<<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ	1278333,33	255666,67	
		<<Նորմա-պլյուս>> ՍՊԸ	1183000	236600	

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հիրմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի՝

1.1 41-րդ կետի հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել.

1.2 «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները:

Նշված կազմակերպությանը հանձնաժողովը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել հանձնաժողովի քարտուղարի ars.avagyan@parliament.am էլեկտրոնային հասցեին մինչև ս.թ. հոկտեմբերի 17-ը ժամը 12:00-ն:

1.3 40-րդ կետի 5-րդ ենթակետ բ) և գ) մասերի՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, քանի որ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար նախատեսված նախահաշվային գինը: Հետևաբար հիմք ընդունելով այն հանգամանքը , որ նիստին ներկա մասնակիցներ չկային՝ նիստը կասեցվում է և առաջարկվում է բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների սույն թվականի հոկտեմբերի 18-ին ժամը 12:00-ին /բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից 2-րդ և ոչ ուշ, քան 10-րդ աշխատանքային օրը/, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեով /ընդունարան/:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

2017 թվականի հոկտեմբերի 17-ին «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից շտկել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին

2017 թվականի հոկտեմբերի 18-ին միաժամանակյա բանակցությունների նիստին ներկա էր «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի և <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչները, որոնք միաժամանակյա բանակցությունների վարման ընթացքում առաջարկեցին հետևյալ գները, <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ՝ 1430000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ և «Նորմա-պլյուս» ՍՊԸ՝ 1372800 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, <<Կոմպասս>> ՍՊԸ-ն չէր ներկայացել միաժամանակյա բանակցությունների վարման նիստին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Նորմա-պլյուս» ՍՊԸ -ին որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

<<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ի և <<Կոմպասս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առագարկները գերազանցում են գնում կատարելու համար նախատեսված նախահաշվային գինը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

7. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հանձնաժողովը որոշեց առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին 3 աշխատանքային օրվա ընթացքում ընթացակարգի քարտուղարի **ars.avagyan@parliament.am** էլեկտրոնային փոստին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Հաջորդ նիստ հրավիրելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել ս.թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մխեյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Հ. Խաչատրյան

_____ Ա. Մանուկյան

_____ Գ. Խաչիկյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավագյան